ETF Working together Learning for life
European Training Foundation



Aziz Jaouani
Niels Haderup Kristensen
Arayik Navoyan

THE EU AGENCY SUPPORTING COUNTRIES TO DEVELOP THROUGH LEARNING

# ՑԿՅԱՆՍ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԴՈՒՐՍ ԲԵՐՎԱԾ ՓԱՍՏԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆ



# Թուրինի գործընթացի կառուցվածքը

**Մակարդակ 1**

Քաղաքականության և համակարգի կատարողականի մշտադիտարկում

**Որքանո՞վ են կրթական և վերապատրաստման համակարգերը լավ և հավասար հնարավորություններ ապահովում ուսումնառության համար:**

**Մակարդակ 2**

Ազգային քաղաքականության և համակարգերի վերանայում

**Ո՞ր քաղաքականությունն է ազդում ցկյանս ուսումնառության համակարգի կատարողականի վրա և ինչպե՞ս:**

- Համահամակարգային ակնարկ՝ բոլոր երկրների երկայնքով (տարեկան)

- Ընտրված քաղաքականությունների և թեմաների խորքային վերլուծություն (ըստ պահանջի)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԿՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿԱՅՆՔՈՎ




**Ուժեղ կողմեր** սովորողների համառությունն ու ավարտելու հեռանկարները (չափ. A.2), ինչպես նաև արտաքին կարիքներին և զարգացումներին արձագանքելը (չափ. B.4).

**Թույլ կողմեր հասանելիություն և գրավչություն** (չափ. A.1), ինչը խոսում է ցածր գրավչության մասին՝ այլ կրթական այլընտրանքների հետ համեմատած:

Ռեսուրսների և դրանց բաշխման **պակաս** (չափ. C.2)

Գերազանցության նկատմամբ **սահմանափակ ուշադրություն (չափ. B.2),** դիմադրություն նորարարությանը **(չափ B.3):**

# ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ ԵՎ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐ




Ուսումնառության հասանելիություն և մասնակցություն ըստ երկրների և սովորողների տարիքի. համակարգի կատարողականի ինդեքս, ՀԱՅԱՍՏԱՆ, ԵԿՀ գործընկեր երկրներ և միջազգային միջին (2023)

# ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

**Ցկյանս ուսումնառություն.** վերաբերում է ողջ կյանքի ընթացքում ձեռնարկվող ուսումնական գործունեությանը՝ նպատակ ունենալով բարելավել գիտելիքները, հմտությունները/կարողությունները և/կամ որակավորումներն անձնական, սոցիալական և/կամ մասնագիտական դրդապատճառներով: (ԵԿՀ, 2020)

**Կրթության և ուսուցման հասանելիություն.** «…այն պայմանները, հանգամանքները կամ պահանջները (օրինակ՝ որակավորումը, կրթական մակարդակը, իրավասությունները կամ աշխատանքային փորձը), որոնցով կարգավորվում է անհատի մուտքն ու մասնակցությունն ուսումնառությանը»: (Մասնագիտական ուսուցման զարգացման եվրոպական կենտրոն (CEDEFOP), 2014)

**Գրավչություն.** «… այն գործոններն ու բնութագրերը, որոնք ազդում են գրավչության վրա: Դրանք են ՄԿՈՒ ծրագրերի համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին, որակի ապահովումը, ճանաչված որակավորումները»: (Մասնագիտական ուսուցման զարգացման եվրոպական կենտրոն (CEDEFOP), 2014)

ՄԿՈՒ-ն ներառում է ինչպես նախնական, այնպես էլ շարունակական ուսուցում (ՆՄԿՈՒ, ՇՄԿՈՒ):



ETF Working together Learning for life
European Training Foundation

# Ցկյանս ուսումնառություն. հիմնական խնդիրներ

01

**Ցկյանս ուսումնառության հղման շրջանակ.** համապարփակ և սովորողակենտրոն մոտեցման բացակայություն:

02

**Ուսումնական գործընթաց.** Ուսումնական գործունեության և կրթական գործունեություն իրականացնող հաստատությունների ֆրագմենտացիա:

03

**Կառավարում, ֆինանսավորում և մշտադիտարկում.** մասնավոր հատվածի ներգրավում հմտությունների կանխատեսման, զարգացման և ճանաչման, ֆինանսավորման դիվերսիֆիկացիայի, տվյալների և այլ գործընթացներում:

04

**ՇՄԿՈՒ.** տարածվածության, որակի և կառավարման առումով շարունակական վերապատրաստումների անբավարարություն:

05

**Անանցանելիություն.** սահմանափակ հորիզոնական և ուղղահայաց անցումային ուղիներ, փակուղի ՄԿՈՒ շրջանավարտների համար:

06

**Իրազեկում և ճանաչում.** շարունակական մասնագիտական ուղղորդման բացակայություն, միկրոորակավորումների և նախկինում իրականացված ուսումնառության կառուցակարգերի ճանաչում:

European Training Foundation

Working together Learning for life

# ՄԿՈՒ հասանելիություն. հիմնական խնդիրներ

**01** **ՆՄԿՈՒ ներգրավվածության ցածր և նվազող ցուցանիշներ.** միջնակարգ կրթության շրջանավարտների 9% (2.5% նախնական և 6.5% միջին), 84% ԲՈՒՀ (2021)

**02** **ՆՄԿՈՒ անվճար տեղերի սահմանափակ հասանելիություն.** ՆՄԿՈՒ անվճար տեղերը հասանելի են միայն առավել բարձր միավորներ ունեցող թեկնածուներին:

**03** **Վճարովի ՆՄԿՈՒ մասնաբաժնի աճ.** հատկապես միջին ՄԿՈՒ հաստատությունների պարագայում, ինչի արդյունքում ՆՄԿՈՒ հասանելիությունը խոցելի խմբերի համար առավել սահմանափակվում է:

**04** **ՇՄԿՈՒ չափազանց սահմանափակ հասանելիություն՝** հիմնականում սահմանափակ ֆինանսավորման պատճառով (ՄԿՈՒ դպրոցներ, ՀՀ ԱՍՀՆ/Միասնական սոցիալական ծառայություններ, դոնորներ և այլն)

**05** **Մանրամասն տվյալները կամ դրանց բացակայությունը** խոչընդոտում են **ՇՄԿՈՒ** շրջանակի և արդյունավետության չափմանը:

**06** **ԿԱՊԿՈՒ–ի, ներգաղթյալների, փախստականների և այլ խոցելի խմբերի համար ՄԿՈՒ հասանելիությունը խթանող համապարփակ քաղաքականության բացակայություն:**

# ՄԿՈՒ գրավչություն. հիմնական խնդիրները

01

**Երիտասարդության ցածր հետաքրքրվածություն.** հիմնական դպրոցի շրջանավարտների միայն 7%-ն է ընտրում նախնական, իսկ 28%-ը՝ միջին ՄԿՈՒ:

02

**Դժվար անցում դեպի ԲՈՒՀ** և ՄԿՈՒ շրջանավարտների համար ԲԿ առավել կարճատև ծրագրի բացակայություն:

03

**Ուսումնառության ավարտից հետո առկա հնարավորությունների վերաբերյալ անորոշություն.** տվյալների բացակայություն, միասնական հետագծային ուսումնասիրություններ, կանոնավոր մշտադիտարկման կառուցակարգեր և այլն:

04

**ՄԿՈՒ կրթական առաջարկի որակ.** ԱՅՈՒ խթաններ գործատուների համար, ՈԱ և հաշվետվողականության իրականացում, ենթակառուցվածքներ, սարքավորումներ, ուսուցիչներ, դասագրքեր և այլն:

05

**Նախկինում իրականացված ուսումնառության և փորձի ճանաչում,** ինչպես նաև դեռևս չգործարկված միկրոորակավորումների կառուցակարգեր:

06

**ՄԿՈՒ շրջանավարտների միջազգային ցածր գրավչություն՝** մասնավորապես անձնակազմի օտար լեզուների սահմանափակ իմացության պատճառով:

ETF Working together Learning for life

European Training Foundation

# Քաղաքականությանը վերաբերող խորհրդատվություններ

## Ցկյանս ուսումնառություն

- **Ցկյանս ուսումնառության համընդգրկուն տեսլական** և համապարփակ ազգային շրջանակ:
- **Մասնավոր հատվածի աստիճանական ներգրավում** հմտությունների կանխատեսման, զարգացման, կառավարման և ֆինանսավորման գործընթացներում:
- **Շարունակական մասնագիտական ուղղորդում** (միջոլորտային):
- **Որակի և հաշվետվողականության ընթացակարգեր** ՆՄԿՈՒ և ՇՄԿՈՒ իրականացնող բոլոր հաստատությունների համար:

## Հասանելիություն

- **Անվճար ՆՄԿՈՒ բոլոր քաղաքացիների համար՝** գործընթացների և ռեսուրսների օպտիմալացման միջոցով**:**
- **ԿԱՊԿՈՒ-ի, հարկադիր տեղահանվածների և միգրանտների** ընդգրկում ՄԿՈՒ կրթուղիներում:
- **ՇՄԿՈՒ-ի ազդեցության և դրա ֆինանսավորման մշտադիտարկում՝** ՇՄԿՈՒ շրջանակն ընդլայնելու և արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:
- **«Աշխատանքի երաշխիք»–ի ներդրում՝** հատուկ ուշադրություն դարձնելով խոցելի խմբերին

## Գրավչություն

- **ՄԿՈՒ հաստատությունների և մասնագիտությունների բաշխման օպտիմալացում** և թվային ուսումնառության ներմուծում:
- **ՄԿՈՒ առաջարկի և աշխատաշուկայի կարիքների** առավել սերտ կամրջում՝ մասնավոր հատվածի հետ գործակցությամբ (ներառյալ **միջազգայնացումը**)
- **ՄԿՈՒ–ից ԲՈՒՀ անցման դյուրինացում**, ինչպես նաև 4-րդ, 5-րդ և 6-րդ մակարդակների միջև կապերի հստակեցում:
- **Մասնագիտական ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման համակարգի և միկրոորակավորումների գործնականացում՝** ՇՄԿՈՒ գրավչությունը խթանելու համար:



ETF Working together Learning for life
European Training Foundation

# Ուղղորդող հարցեր աշխատանքային խմբերի քննարկման համար

- **Համաձա՞յն եք արդյոք թվարկված խորհրդատվությունների հետ:** Եթե համաձայն չեք, բացատրեք, թե ինչու և առաջարկեք այլընտրանքներ:

- **Ո՞րը կլինի խորհրդատվությունները կյանքի կոչելու լավագույն միջոցը,** ո՞ր հաջորդականությամբ և ովքե՞ր կլինեն ներգրավված հիմնական դերակատարները:



ETF Working together Learning for life
European Training Foundation